# ՏԱՐԵԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ
## Ս. Թ. ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ
## (1962 — 1963)

Ամեն. Տ. Եղիշէ Ս. Արքեպս. Տէրտէրեան
Բարեխնամ Պատրիարք Ս. Աթոռոյ,
Գերշ. Սրբազան Հայրեր, Հոգշ. Եղբայրներ,
Սիրելի Ծնողներ և Յարգելի Հանդիսականներ

Աստուածային օգնութեամբ և Ձեր Ամենապատուութեան հայրական հոգածութեամբ, առիթը տրուեցաւ մեզի այս տարի ևս շարունակելու Ս. Թ. Երկրորդական Վարժարանի ազգաշէն գործը:

Վարժարանիս տարեփակի այս հանդիսութեան առթիւ, պիտի ներկայացնեմ այն՝ 1962-63 դպրոցական տարեշրջանի կրթական, բարոյական և տնտեսական տեղեկագիրը:

Այս տարի ևս Վարժարանիս օրինական Տեսչին՝ Հոգշ. Տ. Կիւրեղ Վրդ. Գաբրիկեանի Ս. Աթոռէն պաշտօնով բացակայութեան պատճառաւ, զարձեալ առժամաբար նուաստս վարեց Տեսչական պաշտօնը դպրոցէն ներս:

Վարժարանիս պաշտօնական բացումը տեղի ունեցաւ 1962 տարւոյ Սեպտեմբեր 1ին, որմէ անմիջապէս ետք սկսան կանոնաւոր դասաւանդութիւնները:

**Աշակերտութիւն Վարժարանիս.**— Այս տարի Վարժարանիս աշակերտութեան ընդհանուր թիւը եղաւ 315, բաժնուած հետեւեալ ձեւով.—

Երկրորդականի բաժնին մէջ 97 աշակերտ, 32 մանչ 65 աղջիկ:

Նախակրթարանի բաժնին մէջ 152 աշակերտ, 77 մանչ 75 աղջիկ:

Մանկապարտէզի բաժնին մէջ 66 աշակերտ, 34 մանչ 32 աղջիկ:

**Ուսուցչական կազմ.**— Վարժարանիս ուսուցչական կազմը կը բաղկանայ 25 անձերէ, որոնց երեքը միայն Ս. Յակոբեանց Միաբանութեան անդամ Եկեղեցականներ են և անվարձ նուիրումով կը սատարեն Վարժարանիս կրթական գործին:

Միայն գնահատանքի խօսք ունիմ Վարժարանիս ուսուցչական կազմի անդամներուն, որոնք նուիրումով և յաճախ զրկանքով իրենց օժանդակութիւնը բերին այս սրբազան գործին յաջողութեան:

**Կրթական և ուսումնական վիճակ.**— Տարւոյս ընթացքին ունեցանք պարբերական ուսուցչական ժողովներ, ուր նկատի առնուեցան աշակերտաց ուսումնական և կարգապահական հարցեր:

Մեր դպրոցական կրթական ծրագիրը ըստ նախընթացի կը բաղկանայ երեք մասերէ.—

Ա. Մանկապարտէզի բաժին՝ Մէլ, Կոկոն և Ծաղիկ դասարաններ.

Բ. Նախակրթարանի բաժին՝ վեց դասարաններ.

Գ. Երկրորդական բաժին՝ հինգ դասարաններ:

Այս տարի Մանկապարտէզի Ծաղիկ դասարանէն վկայուեցան 21 փոքրիկներ, և պատրաստ են յառաջիկայ դպրոցական տարեշրջանին անցնելու Նախակրթարանի բաժին:

Վարժարանիս Նախակրթական և Երկրորդական բաժիններու կրթական ծրագիրը, ըստ նախընթացի, այս տարի ևս ընթացաւ քաղաքիս կառավարական և այլ վարժարաններու, ինչպէս նաև Անգլիական Ճի. Սի. Իի.ի ծրագիրներուն համապատասխան մակարդակով մը: Այս տարի մեր աւարտական դասարանի ութը աշակերտները կը մասնակցին Ճի. Սի. Իի. քննութեանց. արդիւնքը յայտնի կ'ըլլայ յառաջիկայ Սեպտեմբերին:

Անցեալ տարուան Ճի. Սի. Իի.ի քննութեանց մասնակցող մեր 5 աշակերտներուն արդիւնքը եղած է հետեւեալը.—

Էլի Գոհճայեան, մասնակցած է ութը նիւթերու քննութեանց և ութին մէջ ալ յաջողած է, ինչ որ մրցանիշ մըն է ամբողջ Յորդանանի մէջ, նկատելով որ երկու աշակերտներ միայն ամբողջ երկրին մէջ ձեռք բերած են նոյնկայ արդիւնքը: Ձեռք բերուած այս յաջողութիւնը մրցանիշ մըն է նաև մեր Վարժարանէն ներս, որովհետև նախորդ բարձրագոյն յաջողութիւնը եօթ էր միայն: Էլիին յաջողած նիւթերն են.— Դասական հայերէն, Անգլերէն լեզու, Անգլիական գրականութիւն, Արաբերէն լեզու, Ընդհ. Աշխարհ Պատմ., Աստղաբաշխութիւն, Երկրաչափութիւն և Թուաբանութիւն:

Արփար Յակոբեան.— Դասական հայերէն, Անգլերէն լեզու, Անգլիական գրականութիւն, Արաբերէն լեզու և Ընդհ. Աշխարհ Պատմ.:

Սարգիս Դարագաշեան.— Անգլիական գրականութիւն, Արաբերէն լեզու, Աստղաբաշխութիւն և Երկրաչափութիւն:

Լուսին Մկրտիչեան.— Դասական հայերէն, Անգլիական գրականութիւն և Ընդհ. Աշխարհ Պատմութիւն:

Սեդա Եազըճեան.— Ընդհ. Աշխարհ Պատմ.:

Նաև մեր Վարժարանի նախկին աշակերտներէն Յարութ Գէնճեան յաջողեցաւ Անգլիական գրականութեան նիւթին մէջ, նախապէս արդէն յաջողած էր Արաբերէն լեզուի և Ընդհ. Աշխարհ Պատմութեան նիւթերուն մէջ:

Տակաւին մեր անցեալ տարուան Երկրորդական չորրորդ դասարանի աշակերտներէն Արմենուհի Գաստանճեան, 1963 տարւոյ Յունուարին մասնակցեցաւ Ճի. Սի. Իի.ի քննութեանց և յաջողեցաւ Հայերէնի (Աշխարհաբար), Անգլիական գրականութեան և Ընդհ. Աշխարհ Պատմութեան նիւթերուն մէջ:

digitised by A.R.A.R.@

Ինչպէս կը տեսնուի, անցեալ տարուան մեր ուսանողներէն եօթէն վեցը յաջողեցան Ժի. Սի. Իի Անգլիական գրականութեան ճիւղին մէջ, ինչ որ դարձեա՛լ մրցանիշ մըն է թիւերու համեմատական հաշուով, ամբողջ Յորդանանի Երկրորդական Վարժարաններու նոյն ճիւղին մէջ ձեռք բերած յաջողութեան բաղդատմամբ։

Այս տարի եւս Վարժարանիս կրթական ծրագիրը իրագործուեցաւ հետեւեալ ճիւղերու ուսուցմամբ. — Հայերէն լեզու — Գրաբար և Աշխարհաբար —, Կրօնագիտութիւն, Հայոց պատմութիւն, Պատմութիւն Հայ Մատենագրութեան, Արաբերէն և Անգլերէն լեզուներ և գրականութիւններ, Պատմութիւն Ընդհանուր Ազգաց, Ուսողութիւն, Բնագիտութիւն, Բնալուծութիւն եւայլն։ Կրնանք ըսել թէ մարդկօրէն կարելի կանոնաւորութեամբ իրագործուեցան վերոյիշեալ բոլոր դասընթացքները տեսչութեան հսկողութեամբ։

Ընթացիկ տարւոյս ուսումնական հաշուեյարդարը եկաւ ցուցնելու թէ, Վարժարանիս Նախակրթարանի եւ Երկրորդական բաժնի 249 ուսանողներէն միայն 12ը թերացած ըլլալով իրենց ուսումնական աշխատանքներուն մէջ, ձախողած են Վարժարանիս ուսումնական պահանջքները իրագործել, հետեւաբար կը կրկնեն իրենց դասարանները յառաջիկայ տարւոյ ընթացքին։ Եւ սակայն հակառակ այն իրողութեան որ, դպրոցական տարւոյս սկզբնաւորութեան, ուսուցչական մասնաւոր ժողովներու շարքով մը, աւելի խիստ միջոցառումներ եղան աշակերտներու նկատմամբ ուսումնական մարզին մէջ։ Մինչ անցեալ տարի, աւելի թոյլատու պայմաններով, կրկնողներու թիւը եղած էր 44։ Ուսումնական մարզի մէջ այս յաջողութիւնը, անշուշտ որ քաջալերելի արդիւնք մըն է, և այդ պատիւը կ'երթայ հաւասարապէս ուսուցանողներուն և ուսանողներուն։

**Կրօնական, բարոյական, ազգային դաստիարակութիւն.** — Վարժարանիս կրթական ծրագրին առընթեր, հոգ տարուեցաւ նաև մեր աշակերտներու կրօնական, բարոյական, կարգապահական եւ ազգային դաստիարակութեան։ Այս նպատակներուն իրագործման համար մեզի օրպէս միջոց ունեցանք, մեր Վարժարանի կրօնական և հայագիտական դասերը, մեր կրօնական արարողութիւններն ու պարտաւորութիւնները և մեր կրօնական և ազգային շրջապատը։

Մեր կրօնական պարտաւորութիւնները կատարած ենք ամենայն ճշդապահութեամբ, մեր ուսանողութիւնը առաջնորդելով զանազան ուխտավայրեր, թէ՛ հոգեպէս մխիթարելու և թէ՛ ազգային պարտականութիւն մը կատարած ըլլալու գիտակցութեամբ։ Ըստ նախընթացի, երկիցս, Ս. Ծնունդին և Ս. Զատկին, մեր Վարժարանի ուսանողութիւնը մասնակցեցաւ Ս. Հաղորդութեան Խորհուրդին, և այս առթիւ օտար վարժարաններու հայ ուսանողներն ալ հրաւիրուեցան նոյն Խորհուրդին մասնակցելու։

**Գրական եւ Ատենախօսական հաւաքոյթներ.** — Մեր ուսումնական աշխատանքներու կարգին, ըստ նախընթացի, դպրոցական աշխատանքներէ դուրս, ժամեր յատկացուցինք բանախօսական եւ ատենախօսական հաւաքոյթներու։ Գրեթէ ամէն Ուրբաթ օր, դպրոցական դասընթացքներէ դուրս, ունեցանք մասնաւոր հրաւիրեալներու, ինչպէս նաև ուսուցիչներու և ուսանողներու կողմէ տրուած բանախօսական և ատենախօսական ձեռնարկներ, նիւթ ունենալով ազգային, գրական, գեղարուեստական, պատմական և ընկերային հարցեր։

**Մարզական կեանք.** — Ուսումնական աշխատանքներու կողքին, հոգ տարուեցաւ աշակերտներու մարմնակրթութեան, մանչերու և աղջիկներու համար կազմակերպելով ամէնօրեայ մարզանքի պահեր և դասարանային կամ միջխմբական ֆութպոլի, պասքէթպոլի, վոլիպոլի և փինկ-փոնկի մրցումներ։ Այս տարի Վարժարանէս ներս տեղի ունեցան ֆութպոլի, պասքէթպոլի, վոլիպոլի և փինկ-փոնկի միջդասարանային 32 խաղեր։ 1963 տարւոյ Մայիս 19ին, ժառանգաւորաց Վարժարանի խաղավայրին վրայ, ժողովուրդի հոծ բազմութեան ներկայութեամբ, Վարժարանս ունեցաւ իր տարեկան դաշտահանդէսը, ուր մեր երկսեռ ուսանողութիւնը՝ բաժնուած Արարատ և Մասիս — մանչերու, Սեւան և Երեւան — աղջիկներու, չորս մրցորդ խումբերու, ցուցադրեց իր տարուան մը մարզական աշխատանքներուն արդիւնքը, չափական մարզանքի, մարմնակրթութեան, վազքի, ոստումի և այլ մրցումներու մէջ։

Մեր այս տարուան դաշտահանդէսին համար, Երուսաղէմաբնակ Տէմիրճեան եղբայրներ 150 ժետալներով օժանդակեցին Վարժարանիս։ Այս առթիւ մեր մասնաւոր շնորհակալութիւնը կը յայտնենք կրթասէր յիշեալ երկու եղբայրներուն։

**Հայկական Երաժշտութեան դասընթացք.** — Այս տարի եւս Վարժարանէս ներս շարունակուեցաւ հայ երաժշտութեան ուսուցումը, ուսանողութիւնը հաղորդ պահելու նպատակով հայ տոհմիկ երաժշտութեան գանձերուն, և նաև ճաշակ մը արթնցնելու համար անոնց մէջ, ընդհանրապէս երաժշտութեան հանդէպ։ 1963 տարւոյ Մայիս 23ին, ժառանգաւորաց Վարժարանի հանդիսասրահին մէջ տեղի ունեցաւ Ս. Թարգմանչաց Երկրորդական Վարժարանի հինգերորդ տարեկան Երգահանդէսը, որ ջերմապէս գնահատուեցաւ ներկայ բազմութեան կողմէ։

digitised by A.R.A.R.@

**Ձեռագործային աշխատանք եւ Տարեկան պազար.** — Վարժարանիս դասացուցակին մէջ այս տարի եւս մասնաւոր պահեր տրամադրուած էին ձեռագործի եւ գծագրութեան: Ձեռային այս աշխատանքները վաճառքի դրուեցան ի նպաստ Վարժարանիս կազմակերպուած 1963 Մայիս 25 եւ 26ի աւանդական պազարին, որ 281,625 Փիլսի գումար շահ մը ապահովեց:

Այստեղ կ'արժէ մասնաւոր շնորհակալութեան խօսք ուղղել Վարժարանիս ուսուցչական կազմին, ինչպէս նաեւ Երուսաղէմաբնակ Տիկիններու եւ Օրիորդներու յանձնախումբերուն, որոնք կատարեցին մեր պազարին նախապատրաստական ինչպէս նաեւ հետագայի անհրաժեշտ ամբողջ աշխատանքը: Մեր մասնաւոր շնորհակալութեան կ'արժանանան նաեւ այն բոլոր կազմակերպութիւններն ու անհատները, որոնք նիւթապէս կամ բարոյապէս օժանդակեցին մեր պազարին:

**Սկաուտական շարժում.** — Այս տարի դժբախտաբար ունեցանք միայն արենոյշներ եւ արծուիկներ թիւով 75, այլ այդ խումբերը դադրեցան գոյութիւն ունենալէ, եւ ասիկա, որովհետեւ չկրցանք ունենալ կարող եւ յարմար սկաուտապետ մը այդ համար, եւ երկրորդ՝ Վարժարանս չունէր տեղական եւ նիւթական այն յարմարութիւնները, որոնք գաղութիս մարզական երեք միութիւնները կ'ընձեռեն իրենց սկաուտներուն: Այլ աղջկանց խումբերը շարունակեցին իրենց անուն գոյութիւնը եւ տասնց բացառութեամբ՝ իւրաքանչիւրը անոնցմէ ստացաւ ամբողջովին նոր համազգեստ:

**Գրադարան.** — Վարժարանիս այս բաժինը դարձեալ ճոխացաւ նոր հատորներով: Կրնանք ըսել թէ այլեւս մեր տրամադրելի բոլոր պահարանները լեցուեցան եւ Վարժարանիս ուսանողութիւնը մեծ չափով կ'օգտուի անոնցմէ: Այստեղ մասնաւոր շնորհակալութեան խօսք ունիմ Ամերիկեան Դեսպանատան Օժանդակ Մշակութային Գրասենեակի Վարչութեան, որ տարւոյս ընթացքին 50 հատոր զանազան նիւթերու վերաբերեալ անգլերէն գիրքեր նուիրեց մեր գրադարանին:

**Անհրաժեշտութիւններ.** — Երկու տարիներու տեսչական փորձառութեամբ այս Վարժարանէն ներս, հասած եմ այն եզրակացութեան թէ, մեր Վարժարանը ուսումնական մարզին մէջ թէեւ հասած է պատուաւոր դիրքի մը, այլ պէտք ունի կարգ մը անհրաժեշտ միջոցներու, իր ապագայ բարեկարգ գոյութիւնը ապահովելու:

**ա. — Շինուածական.** — Վարժարանիս շէնքը թէեւ արտաքնապէս կը պահէ իր արդիական տեսքը, այլ ներքնապէս պէտք ունի կարգ մը անհրաժեշտ նորոգութեանց, նախ պաշտպանելու համար աշակերտութիւնը ձմրան ցուրտին եւ ապա իր հաճելի մթնոլորտով հոգեբանօրէն ազդելու համար անոնց վրայ: Արդարեւ, Վարժարանիս դռներն ու պատուհանները եւ այլ ներքին յարմարութիւնները ամբողջական նորոգութեան չեն ենթարկուած 1929էն, Վարժարանիս շինութեան թուականէն ի վեր, եւ այլեւս նախկինները կարկտուելու ի վիճակի ալ չեն: Ամբողջական բրում մը եւս անհրաժեշտ է Վարժարանիս համար, նկատելով որ 13 տարիներէ ի վեր փճացած է նախկինը:

Նոյնպէս, Ուսուցչարանի, Գրասենեակի, Գրադարանի եւ Տարրալուծարանի պահանջքները ամբողջացնելու համար հարկաւոր են Վարժարանէս ներս կարգ մը մասնակի շինութիւններ: Ուսուցչարանը օրինակի համար, որ կը գործածուի 25 ուսուցիչներու կողմէ եւ նաեւ կը ծառայէ որպէս գրասենեակ եւ գրադարան, ունի միայն 5x3 մէթր տարածութիւն մը. այլեւս կրնաք երեւակայել խուռնճաղանճ մթնոլորտը եւ բոլոր անախորժ հետեւանքները, որ կրնան առաջ գալ նման կացութենէ մը: Իսկ տարրալուծարանը որ կը գործածուի մեր բարձրագոյն երեք կարգերու մօտաւորապէս 45 ուսանողներուն կողմէ, որպէս բնագիտական եւ բնալուծական հետախուզութեանց վայր, ունի միայն 5x5 մէթր տարածութիւն մը, եւ իր ներկայ վիճակով երբեք յոյս չի տար նոր ճոխացումներու:

Վարժարանիս փոքրիկ, անձուկ խաղավայրը եւս պէտք ունի անհրաժեշտ լրացումներու, աւելի արդիւնաւոր մարզական կեանք մը ստեղծելու համար դպրոցէն ներս, եւ երկրորդ՝ խնայելու համար մեր ուսանողութեան, ձմեռնային անձրեւոտ եւ պաղ օրերուն դպրոցի շէնքին նրբանցքներուն մէջ պատսպարուելու անախորժութիւնը եւ Տեսչութեան ալ, այս իրողութեան որպէս հետեւանք ստեղծուած բարդութեանց տաղտուկը:

**բ. — Մեքենական.** — Դարձեալ, որպէսզի Վարժարանիս Տեսուչը աւելի մօտէն կարենայ հետաքրքրուիլ դասընթացքներով եւ իր աշալուրջ հսկողութեամբ աւելի արդիւնաւորուին դասապահերը, Վարժարանս պէտք ունի Inter-conn մեքենայի մը: Այս նորաձեւութիւնը ներկայիս կը կիրարկուի օտար շատ մը վարժարաններու մէջ եւ ստացուած արդիւնքը պարզապէս նախանձելի է:

Նկատելով որ Երուսաղէմահայ գաղութը հետզհետէ կը տարածուի քաղաքին պարսպապատ մասէն դուրս, եւ հետեւաբար ծնողներ, խուսափելու համար հեռաւորութեան պատճառած անախորժութիւններէն, իրենց զաւակները մօտակայ վարժարաններ կը սիրեն արձանագրել, եւ դարձեալ նկատելով որ այս ունակութիւնը գէշ հետեւանք կրնայ ունենալ մեր մանուկներուն վրայ հայկական տեսանկիւնէ դիտուած, անհրաժեշտ է որ Վարժարանս ունենայ ինքնաշարժ մը, այդու պատեհութիւնը տալով հայ մանուկին հայ վարժարանի մէջ դաստիարակուելու:

digitised by A.R.A.R.@

Տակաւին Վարժարանս պէտք ունի բնագիտական և բնալուծական 20 հոգինոց դասարանի մը համար անհրաժեշտ կազմածի մը, որպէսզի աշակերտութիւնը չզրկուի այդ դասերուն փորձառական գիտութիւններէն, որոնց վրայ ամբողջապէս հիմնուած են ներկայիս քաղաքակրթական զարգացումները:

գ. — Դաստիարակչական. — Փոխանորդներ մը ըլլալու մասնաւորութիւնը չունիմ, երբ բանի թէ Վարժարանս, նկատի առնելով իր երկրորդական բաժին ունենալը և երկսեռ ըլլալու հանգամանքը, անհրաժեշտաբար պէտք ունի երկու հոգեբան-մանկավարժ և փորձառու ուսուցիչներու, որոնք առանձնաբար դասեր միայն պէտք է տանձնեն Վարժարանէս ներս, այլ իրենց առաջ պարտականութիւնը պէտք է ըլլայ զբաղիլ իւրաքանչիւր աշակերտի ուսումնական, բարոյական և ընկերային հարցերով, և առաջնորդել ուսանողը իր անհատական բոլոր առանձին առաքինութիւններէն և բարդոյթներէն դուրս, այնպէս որ աշակերտը մեծ ապագային ունենալու ոչ միայն ուսումնական՝ այլ հաւատարմութեան գաղափար մը այն մարդերու մէջ: Ըսել են, ցուցակները գերբ ուսումնականները պատրաստել առելի կը կայանայ հոգեկան արժէքներով նե-խուժած մարդեր պատրաստելուն մէջ:

Այլ այս բոլոր պահանջները միամիտ յոյսեր մնալու դատապարտուած կը մնան, երբ կազմակերպութիւններ և անհատներ, արտասահմանի մէջ կամ այստեղ, չգիտնան անհրաժեշտութիւնը Հայ Դպրոցին, և անոր միջոցաւ չբերեն իրենց լումաները հայապահպանութեան ի նպաստ: Ի դէպ, որքա՞ն պատշաճ է պատմագրին խօսքը երկուստեք, ամանդակորին և մանդակներին. Մասնաւոր բաժնոց զէնն իր-կանոց:

**Ծանօթական.** — Հետեւեալն է մեր Վարժարանին 1962 Մայիս 1էն 1963 Յունիս 30ի չորեքտասնամսեայ տնտեսական հաշուեցոյցը:

## ՍՐԲՈՑ ԹԱՐԳՄԱՆՉԱՑ ՎԱՐԺԱՐԱՆԻ ԵԼՄՈՒՏԱՑՈՅՑԸ

1962 **Մայիս** 1էն 22 **Յունիս** 1963

Ա) — ՄՈՒՏՔ

| | |
|---|---|
| Արտասահմանէն նուիրատուութիւնք (100 տոլարէն վար զրկուած անանուանական նուէրներու գումար) | 681.902 |
| Մալաթիոյ Կրթասիրաց Միութենէն | 94.965 |
| Էդուարդ Փանոսեանէ | 71.000 |
| Նշան Իսկէնտէրեանէ | 178.000 |
| Արամ Կիւլսալեանէ | 178.000 |
| Կիւլլապի Կիւլպէնկեան Ֆոնտէն | 714.000 |
| Հաւրէս Գարակէօզեան Հիմնարկէն | 714.500 |
| Օր. Համեստուհի Ամէրճեանէ | 71.400 |
| Հաւրէս Ապէշեանէ | 35.000 |
| Հրանդ Ծաղիկեանէ | 124.950 |
| Համասեբաստահայ Վերաշինաց Միութենէն | 187.425 |
| Գ. Կիւլպէնկեան Հիմնարկութենէն — 1961-62 Տարեշրջանի համար | 535.500 |
| Գ. Կիւլպէնկեան Հիմնարկութենէն — 1962-63 Տարեշրջանի համար | 589.050 |
| Հարաւային Ամերիկայի Հանգանակութենէն (ձեռամբ Տ. Կիւրեղ Վրդ.ի) | 712.000 |
| Աշակերտաց թոշակներէ | 1750.000 |
| Վաճառեալ գրենականէ | 282.895 |
| Պազարէն գոյացած — 1961-62 Տարեշրջանի | 473.400 |
| Պազարէն գոյացած — 1962-63 Տարեշրջանի | 409.985 |
| Հանդէսներէ | 65.5?0 |
| Ունրուայէն նպաստ | 232.500 |
| Համագումար **Մուտք.** — Յ. Տինար | 8102.562 |

Բ) — ԵԼՔ

| | |
|---|---|
| Ելից առաւելութիւն՝ Նախորդ Տարեշրջանէն | 633.707 |
| Գրենական պիտոյք | 105.415 |
| Վաճառելի գրենականք | 226.6(5 |
| Հանդէսներու ծախք | 45.675 |
| Պազարի ծախսեր — 1961-62 Տարեշրջանի | 101.295 |
| Պազարի ծախսեր — 1962-63 Տարեշրջանի | 118.360 |
| Մանր ծախք եւայլն | 197.750 |
| Կահ-կարասեաց եւ այլ նորոգութիւնք | 89.010 |
| Ձեռագործի նիւթեր | 35.810 |

digitised by A.R.A.R.@

| | |
|---|---|
| Բացառիկ ծախսեր | 6.020 |
| Ամսական պաշտօնէութեան (Մինչեւ Յունիսի վերջը) | 6701.500 |
| Համագումար Ելից. — Յ. Տինար | 8261.147 |
| » » Մտից. — Յ. Տինար | 8102.562 |
| Պիւտճէի Բաց 1962 - 63 Տարեշրջանի (14 ամիս) | 158.585 |

## ՍՐԲՈՑ ԹԱՐԳՄԱՆՉԱՑ ՎԱՐԺԱՐԱՆԻ

### Նուիրատուութեանց լիակատար ցանկը

1962 Մայիս 1էն մինչեւ 1963 Յունիս 22

| | ՏՈԼԱՐ | Յ. ՏԻՆԱՐ |
|---|---|---|
| ՄԱՅԻՍ 1962 | | |
| Տիկին Ազնիւ Հանրըլեանէ | 25 | 8.860 |
| Մալաթիոյ Կրթասիրաց Միութենէն | 135 | 47.250 |
| ՅՈՒՆԻՍ 1962 | | |
| Տիկին Սարգիս Զարդարեանէ | 50 | 17.720 |
| » Չարլզ Աւագեանէ | 25 | 8.860 |
| » Մայքըլ Սէյմուրէ | 25 | 8.860 |
| » Սարգիս Զարդարեանէ | 25 | 8.860 |
| » Անտրիւ Յակոբեանէ | 25 | 8.860 |
| » Պէրթա Թրէյսիէ | 50 | 17.720 |
| » Ջօն Կարապետեանէ | 25 | 8.860 |
| ՅՈՒԼԻՍ 1962 | | |
| Հար. Ամերիկայի Նուիրակութենէ, ձեռամբ Տ. Կիւրեղ Վրդ. Գաբիկեանի | 2000 | 712.000 |
| Տիար Էդուարդ Փանոսեանէ | 200 | 71.000 |
| Տիար Նշան Իսկէնտէրեանէ | 500 | 178.000 |
| Տիար Արամ Կիւլսալեանէ | 500 | 178.000 |
| ՍԵՊՏԵՄԲԵՐ 1962 | | |
| Կիւլլապի Կիւլպէնկեան Հիմնարկէն | 1000 | 356.500 |
| ՆՈՅԵՄԲԵՐ 1962 | | |
| Հաուըրտ Գարակէօզեան Ֆօնտէն | 1000 | 357.000 |
| Տիկին Թագուհի Դանիէլեանէ | 25 | 8.990 |
| ԴԵԿՏԵՄԲԵՐ 1962 | | |
| Տիար Կարօ Գազազեանէ | 25 | 8.750 |
| » Վարդան Խաչիկեանէ | 25 | 8.750 |
| » Արշակ Օտապաշեանէ | 25 | 8.925 |
| » Ստեփան Բանիկեանէ | 10 Ամեր. Ոսկի | 7.200 |
| Օրիորդ Համեստուհի Ամէքճեանէ | 200 | 71.400 |
| Տիար Գաբրիէլ Սիմոնեանէ | 7 Կիպրական Ոսկի | 6.860 |
| ՅՈՒՆՈՒԱՐ 1963 | | |
| Տիար Սիմոն Շմաւոնեանէ | 25 | 8.925 |
| Մալաթիոյ Կրթասիրաց Ընկ.էն | 135 | 47.655 |
| Ամէրիքըն Ֆրէնտզ Ավ Տհը Միտըլ Իսթ.էն | | 10.000 |
| Տիար Մարթին Աբգարեանէ | 25 | 8.900 |
| » Աւոտ Յովսէփեանէ | 25 | 8.400 |
| » Աղասի Այվազեանէ | 25 | 8.900 |
| Տիկին Ագնէս Գույրճեանէ | 50 | 17.800 |
| Հայ Ամերիկ. Վեթերաններէ | 25 | 8.900 |
| Տիկին Զապէլ Պէյլէրեանէ | 50 | 17.800 |
| » Ալիս Թաւճեանէ | 25 | 8.900 |
| » Էլիզապէթ Պարոնեանէ | 25 | 8.900 |
| Տիար Արամ Խարսըմէ | | |

digitised by A.R.A.R.@

| | ՏՈԼԱՐ | Յ. ՏԻՆԱՐ |
|---|---|---|
| Տիար Հաուըրտ Արէշեան | 100 | 35.600 |
| » Թէնէկպեան | 25 | 8.900 |
| » Խաչիկ Հայտարեան | 25 | 8.900 |
| Տիկին Շնորհիկ Միքայէլեան | 25 | 8.900 |
| Տիար Նուպար Ամպրուքեան | 25 | 8.900 |
| » Հմայեակ Տիգրանուհի Սարգիսեան | 25 | 8.900 |
| Տիկին Մէրի Գալիպեան | 25 | 8.900 |
| Տիար Մարթին Ազնաւուրեան | 50 | 17.850 |
| » Սարգիս Զարդարեան | 25 | 8.925 |
| » Մայքըլ Սէյմուր | 25 | 8.925 |
| Տիկին Լիլի Գասպարեան | 25 | 8.911 |
| Հայց. Եկեղեցւոյ Կիրակնօրեայ Վարժ.էն | 25 | 8.911 |
| Ս. Յովհաննէս Հայց. Եկեղեցւոյ Տիկնանց Միութենէն | 25 | 8.911 |
| Տիար Նազար Հիմայեան | 25 | 8.725 |
| **ՓԵՏՐՈՒԱՐ 1963** | | |
| Տիար Սեդրակ Սուլթանեան | 25 | 8.800 |
| » Սիմոն Ճինկէօզեան | 35 | 12.460 |
| Տիկին Ովսաննա Տ. Յակոբեան | 25 | 8.900 |
| » Թուրճ Ասլանեան | 25 | 8.900 |
| Սըլլի Հանրըլեան | 25 | 8.900 |
| Տիկին Թ. Կուլէ | 25 | 8.900 |
| » Եւփիմէ Գասապեան | 25 | 8.900 |
| **ՄԱՐՏ 1963** | | |
| Տիկին Մէօնիրիւպէ Թիմուրէ | 25 | 8.925 |
| Զմէկածագի Հայրենակցական Միութենէն | 50 | 17.850 |
| Տիար Աւետիս Ովանեան | 25 | 8.925 |
| » Հրանդ Տապիկեան | 350 | 124.950 |
| » Ժան Պօյաճեան | 15 | 5.355 |
| Օրիորդ Սառա Ասլանեան | 25 | 8.925 |
| **ԱՊՐԻԼ 1963** | | |
| Տիար Ալպերթ Փարիջանեան | 25 | 8.925 |
| » Երուանդ Յակոբեան | 25 | 8.925 |
| » Յովհաննէս Պէրպէրեան | 25 | 8.925 |
| Համալսարանաւարտից Վերաճինաց Միութենէն | 525 | 187.425 |
| Տիար Միհրան Ալթունեան | 15 | 5.355 |
| Տիկին Ազնիւ Հանըրըեան | 25 | 8.925 |
| Տիար Յակոբ Գուճիզանեան | | 10.000 |
| Հայ Կին Ակումբէ | 50 | 17.850 |
| Տիար Զարեհ Աւագեան | 25 | 8.925 |
| » Զարեհ Յակոբեան | 25 | 8.925 |
| Տիկին Պէրթա Թրէյսիէ | 50 | 17.850 |
| » Ժան Կարապետեան | 25 | 8.925 |
| **ՄԱՅԻՍ 1963** | | |
| Օրիորդ Լէյլա Գարակէօզեան (Հաուըրտ Գարակէօզեան) | | |
| Կալուստ Կիւլպէնկեան Հիմնարկէն | 1000 | 357.500 |
| Յովակիմ-Աննա Կիրակն. Դպրոցէն | 1000 | 357.500 |
| Տիար Ժան Մ. Ստեփանեան | 80 | 28.600 |
| Եանկ Ուիմընզ Կլըպ Ավ Արմինիըն Չըրչ-էն | 75 | 26.812 |
| | 25 | 8.937 |
| **ՅՈՒՆԻՍ 1963** | | |
| Գ. Կիւլպէնկեան Հիմնարկէն (1961 – 62ի համար) | 1500 | 535.500 |
| Գ. Կիւլպէնկեան Հիմնարկէն (1962 – 63ի համար) | 1650 | 589.050 |
| Տիկին Մաքրուհի Միքայէլեան | 25 | 8.925 |
| Համագումար՝ Յ. Տինար | | 4888.232 |

digitised by A.R.A.R.@

**Շնորհակալիք.** — Տնչութեան և ուսանողութեան կողմէ խորապէս շնորհակալութիւն կը յայտնենք այն բոլոր նուիրատուներուն, որոնք չուզեցին անտեսել հայ մանուկին դաստիարակութեան հարցը, և նիւթական օժանդակութեամբ գործապէս պատասխանեցին մեր զանազան առիթներով ուղղած կոչերուն: Թող Ամենակալն Աստուած բարօր և առողջ պահէ յիշեալ նուիրատուները, որոնք չմոռցան իրենց լումաները ձգել հայ մշակոյթի ծաղկման գանձանակին մէջ:

Մեր շնորհակալութեան մասնաւոր խօսքը կ'երթայ առաջին առթիւ Գալուստ Կիւլպէնկեան Հիմնարկութեան, որովհետև այն ազգապարծան կազմակերպութիւնը 1961-62 և 62-63 դպրոցական տարեշրջաններու համար, Վարժարանիս կարօտ ուսանողաց նպաստելու ըրաւ 3150 տոլարի օժանդակութիւն մը: Թող Տէրը իր երկնային փառքին արժանացնէ Գալուստ Կիւլպէնկեան գերդաստանի հին և նոր բոլոր ննջեցեալները, և երջանկութիւն ու բարօր կեանք պարգևէ այն գերդաստանի ի կեանս եղող բոլոր անդամներուն, ինչպէս նաև Պատուարժան Հիմնարկութեան ամբողջ անձնակազմին:

Շնորհակալութեան մասնաւոր խօսք ունինք նաև Հաուըրտ Գարակէօզեան Հիմնարկութեան և անոր ներկայացուցիչ ազգաշէն Օր. Լէյլա Գարակէօզեանի, որովհետև այն ազնուական կազմակերպութիւնը 1961-62 և 62-63 դպրոցական տարեշրջաններու համար իր կատարած 2000 տոլարի նուիրատուութեամբ Վարժարանէս ներս շարունակեց պահել Երկրորդական դասարաններէն մին, ի յիշատակ հանգուցեալ Հաուըրտ Գարակէօզեանի: Թող Ամենակալը իր յոյսերուն արժանացնէ յիշեալ հանգուցեալը, և իրենները առատացնէ իր շնորհներով:

Նմանապէս Տնչութեան և բարերարեալ ուսանողներուն կողմէ մասնաւոր շնորհակալութիւն կը յայտնեմ Կիւլլապի Կիւլպէնկեան Հաստատութեան, որովհետև այն պատուական կազմակերպութիւնը շարունակեց պահել մեր Վարժարանէն ներս Երկրորդական դասարան մը, 1961-62 և 62-63 դպրոցական տարեշրջաններու համար իր կատարած 2000 տոլարի նուիրատուութեամբ: Ամենակարողը թող երկնային տեսութեան արժանացնէ Կիւլլապի Կիւլպէնկեան գերդաստանի բոլոր ննջեցեալները և իր բարիքներով հոխացնէ Կիւլլապի Կիւլպէնկեան Հաստատութեան ամբողջ անձնակազմը:

Կանխաւ շնորհակալութիւն կը յայտնենք նաև Վարդանանց Ասպետներու Ամերիկահայ Կազմակերպութեան, որ խոստացաւ իր տարեկան 1000 տոլարի յատկացումը շարունակել Վարժարանիս:

Նմանապէս կանխաւ շնորհակալութիւն կը յայտնենք Գարագատարեան Հրանդ, Հերամ և Թաուլ Ծագիքեան Եղբայրներուն, որոնք իրենց գերդաստանի ննջեցեալներուն յիշատակին տարեկան 1050 տոլարի օժանդակութեամբ խոստացած են ամբողջ դասարան մը պահել մեր Վարժարանին մէջ, և որոնցմէ մին արդէն իսկ ղրկած է իր բաժին 350 տոլարի գումարը:

Տնչութեան և ուսանողութեան զգացուած շնորհակալութիւնը կը յայտնենք նաև Ամերիկայի Համաեկեղեցական Վերաշինաց Միութեան, որ այս տարի ևս ընդառաջելով մեր խնդրանքին, շարունակեց իր 525 տոլարի տարեկան յատկացումը մեր Վարժարանին, սատարելով մեր կրթական այս գործին, իր նկատմամբ մեր ունեցած երախտագիտական զգացումը վերանորոգելով մեր մէջ:

Երկիցս երախտապարտ ենք նաև Ամերիկաբնակ Տէարք Նշան Խաչէնտէրեանի և Արամ Կիւլտալեանի, որոնք Վարժարանիս ունեցած անտեսական տագնապալի մէկ շրջանին, իրենց եղած առաջին իսկ դիմումին գրաւոր պատասխանեցին, 500ական տոլարի առատաձեռն նուիրատուութեամբ: Թող Բարձրեալն Աստուած իր շնորհներով լիացնէ զիրենք:

Մեր շնորհակալութեան զգացումները արտայայտելէ ետք, երբ պահ մը կը մտածենք, կ'անդրադառնանք որ այս բոլոր նուիրատուութիւնները անհրաժեշտ և ցանկալի թէև, այլ անոնք լեցակ մը չեն մեր նոր յոյսերուն, եթէ չըլլայ Ս. Աթոռին անհրաժեշտ հովանին մեր վրայ տարածեալ:

Սրբազան Հայր, այս Վարժարանը ծլարձակեցաւ Ձեզմով փխաւորուած Ս. Յակոբեանց Միաբանութեան խնամքին տակ: Ս. Աթոռին նիւթական անցեալի շրջաններուն, ան ևս թևերցաւ իր թերաբարբառ ցօղունին վրայ, այլ տակաւ իր նիւթական կայունութիւնը գտնող այս հաստատութեան հետ, ան ևս պիտի աւչաւորի և պտղաբերի: Մեր յոյսերը կը ճիւղաւորուին միմիայն այս Տանին բունին վրայ: Որպէս հարազատ բարունակ մը, Սրբոց Թարգմանչաց Վարժարանը պիտի ըլլայ այս Աթոռին խաչն ու պարծանքը միանգամայն:

Այժմ Ձեր Ամենապատուութեան կը ներկայացնեմ մեր Վարժարանին ներկայ տարւոյս հունձքը եղող ինը շրջանաւարտ-շրջանաւարտուհիները և Վարժարանիս ուսման և վարուց մէջ յառաջացեալ ուսանողները, և կը խնդրեմ որ անոնց վկայականներուն և մրցանակներուն հետ շնորհէք նաև Ձեր հայրական օրհնութիւնները, որպէսզի անոնք՝ բառ իրենց խոստման, մնան հաւատարիմ այն ոգիին որ ջամբուեցաւ իրենց այս Վարժարանին մէջ և ապրին որպէս պարկեշտ մարդեր և անխար հայեր, և միշտ հպարտ զգան աշակերտած ըլլալնուն համար Ս. Աթոռոյս կողմէ հովանաւորեալ Ս. Թարգմանչաց Վարժարանին:

Մատչելով ի համբոյր Ձեր Ս. Աջոյն
խոնարհ սիրով
**ՓԱՌԷՆ ԱԲՂ. ԱՒԵՏԻՔԵԱՆ**
Առժ. Տեսուչ
Ս. Թ. Երկրորդական Վարժարանի

digitised by A.R.A.R.@